

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐԱՆՈՒՄ

ԺԴ ԴԱՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԸ¹

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Պատմության ինստիտուտը դիտա-հետազոտական աշխատանքների իր պլանում նախատեսել է պատմության մի շարք սկզբնաղբյուրների հրատարակման խրախուսելի աշխատանքը: Այդ նախաձեռնության առաջին արդյունքներից մեկն է պատմական գիտ. թեկնածու Լ. Խաչիկյանի կողմից կազմված «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ»² աշխատությունը, որը լույս տեսավ 1950 թվականին: Ինչպես հայտնի է 14—16-րդ դարերը հայ պատմագրության ամենամույ դարերն էին: Դրասեր և ստեղծագործ հայ ժողովուրդը 300 տարվա ընթացքում տվեց միայն մեկ պատմիչ՝ Թովմա Մեծոփեցուն: Այդ ընդհանուր խոսանացման մեջ հայ հեղինակները ստեղծեցին փոխափայկական ու դավանաբանական բովանդակության որոշ աշխատություններ, որոնցով կարողացան մաքրած կաթոլիկ միսիոնարների ու նրանց հայ հետևորդների ասիմիլատորական ձգտումների գես և այդ գոտեմարտերից հաղթանակով դուրս եկան:

Հինգ հարյուր տարի, աննշան ընդմիջումներով, Հայաստանն ամեն կողմից ոտնատակ էր արվում թյուրք-պարսկական նվաճողների ու նրանց կամակատարների կողմից: «Հազիվ էր ժողովուրդը ուշքի գալիս մի ավերիչ փոթորկից, երբ վրա էր հասնում նորը: Եվ նորից կործանվում էին գյուղերը, քաղաքները, կործանվում էր կուլտուրան, ոչնչանում էին աշխատավոր հայերը»²

Այս վայրկյանների մեջ մարդիկ կորցրել էին ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլև կուլտուրական զարգացման նվազագույն պայմանները: Ուստի պատահական չէ, երբ մամանակակիցները հուսալքված և հիասթափված իրենց ծանր և դառնալից վիճակից, հիշատակարաններում երբեմն ավելացնում են. «աւելորդ համարեցաք առ ի գրել զգառնութիւն ժամանակիս» (էջ 162), որովհետև «խաւար անլոյս և մէզ անմխիթար տարածեալ մածեալ ունէր զամենայն երեսս երկրիս» (էջ 192), կամ «վա՛, զի շաղաթին յահէն սասանեալ կամք և տարակուսեալ և ոչ գիտեմք թե վերջն ինչ է լինելոց, աւազ անտանելի դառնութեանս» (էջ 610) և այլն:

14-րդ դարում պատմիչների քաջակայության պայմաններում հասկանալի է դառնում, թե ինչքան կարևոր և առաջնահերթ նշանակություն ունի քննության ենթակա ժողովածուն: 14-րդ դարի հայ ժողովրդի պատմության գիտական մշակման համար:

«ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուն քաղկացած է 793 էջից (36 + 757)՝ առաջարանից (27 էջ) 845 մեծ ու փոքր հիշատակարանների քննարկից՝ 659 էջ), առարկայական, պաշտոնների և տիտղոսների, տեղանունների և անձնանունների ցանկերից (94 էջ): Բնագրերին զուգընթաց տողատակ երբեմն տրված են համառոտ ծանոթագրություններ, որոնք սգնում են քննարկերը լավ հասկանալուն:

Եթե շնչվենք Դ. Հովսեփյանի մինչև 13-րդ դարի հիշատակարանների ժողովածուն (անտիպ), ապա սույն ժողովածուն եզակի մի օրինակ է հայ աղբյուրագիտության մեջ, որը պետք է մասնագետների լայն շերտերի սեփականությունը դառնա: Ընկեր Լ. Խաչիկյանը նախ Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից Զեռագրատան (Մատենադարան) հայկական ձեռագրերի ֆոնդից հավաքել է 14-րդ դարին վերաբերող 513 մեծ ու փոքր հիշատակարան, որոնց մեծագույն մասը առաջին անգամ մատչելի են դառնում մասնագետներին այս ժողովածուի միջոցով: Երկրորդ՝ սույն ժողովածուի մեջ ի մի է հավաքվել տարբեր վայրերում և ժամանակներում հրատարակված հայերեն ձեռագրերի ցուցակներից 14-րդ դարի հիշատակարանները և հեշտացրել նրանց ոգտագործումը:

¹ «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» հայկական ՍՍՌ ԳԱ-ի հրատարակություն, Երևան 1950 թ.:

² «Գրավզա», 1935 թ. № 327 (6373):

Ժողովածուի առաջարանում (էջ VII—XXXIII) հեղինակը ցույց է տալիս հիշատակարանների որպես սկզբնաղբյուրի նշանակությունը, նշում նրանց դրական և առանձնահատուկ կողմերը, այնուհետև համառոտ և ընդհանուր դժերով բնութագրում 14-րդ դարի հայ ժողովրդի կացությունն ըստ հիշատակարանների, ապա թվում՝ թե ժողովածուն ինչ հարցերում կարող է օգնել մասնագետներին, նշում օգտագործած աղբյուրները և աշխատությունը կազմելու սկզբունքները: Առաջարանում առաջ բաշված հարցերի լուծումը, շարադրության սահուն և պարզ ոճը, ժողովածուի հրատարակման սկզբունքների մշակումը կատարված է հմտությամբ և դիտական սկզբունքներով: Լամբուսյանը և բարեխղճությամբ հավաքված է հիշատակարանների ամեն մի փշրանք՝ 2—3 բառ, մի փոքրիկ նախադասություն՝ «ղվարդան գրողս յիշեա, ով եղբայր իմ» (էջ 474) և այլն:

Ժողովածուի նյութերը հնարավորություն են տալիս մեզ, նշանակալի շարժվել, վեր բարձրացնելու 14-րդ դարի մեր ժողովրդի պատմության անհայտության բողբ և առանձին դեպքերում անցյալի իրականությունը տեսնել իր բազմապիսի կողմերով, բմբունել ժամանակի ոգին և տրամադրությունները:

Ինչ նյութեր ենք գտնում ժողովածուի մեջ: Որոշ հիշատակագիրներ իրենց ժամանակի իրականությունը տալիս են ընդհանուր գույներով, և կամ հուսալքված ժամանակի աղետներից նախընտրել են լուր. օրինակ՝ 1386 թվականին Հակոբ Գրիշո գրում է. «... որ է դառն և լալարեր, զի ամեններեան՝ մեծ է ի փոքր, ձանձրացեալ կան ի կենաց» (էջ 559), կամ 1360 թ. Պետրոս գրիչը գրում է. «Ի դառն և յանբարի ժամանակիս, զոր ոչ կարեմք լըսդ զրով արկանել, բայց միայն լուր» (էջ 446):

Բայց բերն են հետևել Հակոբ և Պետրոս գրիչների օրինակին: Ժողովածուի մեջ գտնում ենք մի շարք եղևությունների ստույգ ժամանակը, առանց որի, հաճախ մեծ ջանք էին թափում տվյալ իրադարձության ժամանակագրական մոտավոր եզրերը գտնելու համար: Բերենք երկու օրինակ. Գ. Հովսեփյանը «նաղբակյան» կամ Պոռչյանը հայոց պատմության մեջ» (մասն Ա, Վաղարշապատ, 1928 թ.) աշխատության 187—189 էջերում մի շարք վկայություններ բերելուց հետո միայն եզրակացնում է, որ Պոռչի թոռ իշխան Նաչին մահացել է 1317 թ., մինչդեռ այս ժողովածուի մեջ տեղ է գտել ժամանակակից մեկի փոքրիկ հիշատակարանը, որտեղ կարդում ենք. «Մեծ իշխանն Հայոց, թոռն Պռաշա, որդին Հասանա՝ Իաշի, հանգեալ ի Քրիստոս թվ. 242 (1317), քաղոցի Ժ (10) և դեկտեմբերի ԺԸ (18)» (էջ 128):

Մի այլ օրինակ՝ 1400 թվին մի ընդարձակ հիշատակարանում հետաքրքիր տեղեկություններ են պահվել լենկ-Թեմուրի Հայաստան և այլուր կատարած արշավանքների, ինչպես նաև Խրենչակի պաշարման և գրավման մասին: Ինչպես հայտնի է Նրնչակի պաշարման և գրավման տեղեկությունները մեզ հասել են համառոտ և հակասական վիճակում: Այսպես՝ Թ. Մեծոփեցին Խրենչակի պաշարումը նշում է 1387 թվից («Պատմություն լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց», 1860, Փարիզ, էջ 17), Գրիգոր Խլաթեցին հաստատում է այդ վկայությունը («Հիշատակարան աղևտից», Վաղարշապատ, 1897 թ., էջ 9—10), միաժամանակ ավելացնում, որ այն գրվել են 15 տարի պաշարելուց հետո (նույն տեղ, էջ 11): Վրաց աղբյուրները Նրնչակի պաշարման տեղեկությունը համարում են 10 տարի (Վ. Մելիքսեթ-Քեկ «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատոր Բ., Սբեան, 1936, էջ 107, 108 և այլն), իսկ Կլավդիոսն՝ 3 տարի: Ուսումնասիրողներից Մինորսկին կարծում է, որ Նրնչակի պաշարումը սկսվել է 1357 թվին և տևել մինչև 1400 թվի՝ լենկ-Թեմուրի Վրաստան արշավելը (M. V. Minorski «Transcaucasica», Paris, 1930, p. 94—96): Վերոհիշյալ հիշատակարանի հեղինակ Գրիգորը շատ կարևոր տեղեկություն է տալիս մեզ հուզող հարցի մասին. բերենք այդ հատվածը. «Եւ մինչ սակաւ մի խաղաղացեալ երկիր, փոքր ինչ ոգի առին մարդիկ ի սաստից ցասման շարին, արքայն Վրաց Գորգի անարի յաղթութիւն ինչ արարեալ... եկն ի դղեակն Նրնչակոյ ի դաւառին նախաւանոյ, և էհան անտի զորդի Ահմատ դանին՝ զսուլտան Տահիրն, որ էր հսարեալ ի զաւրացն Թաւմուր-Լանկին յՊԼՆ (1386) ամէն մինչ ի ՊԽԸ (1399) ամ թուականին, զամս ԺԳ (13)» (էջ 628):

Ժողովածուի մեջ համառոտ, բայց ուշադրավ տեղեկություն գտնում ենք ընդդեմ նվաճողների հայ և աղբյուրական ժողովուրդների եղբայրության վերաբերյալ: 1394 թվի մի հիշատակարանում այդ մասին կարդում ենք. «Այսօր ի դուրս ելան մեր հայերս և բերդի թուրքերն և Ժ (10) չաղաթա սպանին և է (7) մարդ բռնեցին, և բաղում աւար առին» (էջ 610):

Ծիշտ է, 14-րդ դարում շինարարական աշխի ընկնող աշխատանքներ չեն եղել, բայց և առանձին շինարարությունների մասին գտնում ենք ստույգ տեղեկություններ (էջ 224, № 285, էջ 348, № 435 և այլն):

Բավական հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ գտնում ենք հարկերի, նրանց չափի, հարկերի զինված ջոկատներով հավաքելու մասին (էջ 46 № 61, 46—48 № 62, 104, Գ, 138—139 № 178 և այլն)։ Ժողովածուն հարուստ և հետաքրքիր տեղեկություններ է տալիս պատմական աշխարհագրության վերաբերյալ։ Մի քանի տասնյակի հասնող տեղանունների՝ գյուղերի, անապատների, վանքերի մասին առաջին անգամ տեղեկանում ենք սույն ժողովածուի միջոցով։ Բազմազան են հայկական գաղթավայրերի և նրանց ուղիների մասին եղած վկայությունները։ Ժողովածուն բավական հարուստ է 14-րդ դարում ապրած անհայտ կամ բիշ հայտնի հեղինակների, գրիչների, քաղաքական և եկեղեցական գործիչների մասին տեղեկություններով։ Ժողովածուն լեզվաբաններին տալիս է խիստ հետաքրքիր նյութ, մանավանդ եթե նկատի ունենանք, որ գրիչները մեծ մասամբ օգտագործել են ժամանակի խոսակցական լեզուն, բարբառային առանձին դարձվածքներ և այլն։ Ժողովածուն առատ նյութ է տալիս ժողովրդի վիճակի, կենցաղի և այլ հարցերի մասին։ Առանց չափազանցության սովորածավալ այս պիրբը բազմաթիվ հարցերում հայագետներին ծառայելու է որպես 14-րդ դարի առձեռն տեղեկատու։

Սակայն ուշագրավ է նաև ժողովածուի մի այլ կողմը։ Վերջինիս միջոցով իմանում ենք, թե այս կամ այն աշխատությունը, ինչ պայմաններում և ինչպես է ընդօրինակվել։ օրինակ՝ «...կատարեցի գուրբը դիրքս զայս ի դառնացեալ և ի վշտաբեր ժամանակիս, յորում էր թիւս Հայոց Պէ (1391), ... Այնց շաւ էր ժամանակս, որ ի շուրս տաւրին լոխն գրեցի. զամէն փախրստական կացինք ի կատարս լեւանց՝ քաղցած և պանդուխտ, և ամենեկեան մեռեալ էիմք կենդանաւին ի յահէ Խրամուրին» (էջ 587)։ Մեկ ուրիշը գրում է. «Եւ ես ծանաբարեոն մաւմնով զբուրք և զօրինակ. զգրիչ և զքանաֆ ի յուս իմ բարձեալ. ի նետ զնայի. կարգայի և որչափ ժամանէի գուրբը մատեանս դրէի բազում նեղութեամբ և շարշարանօք. զի ուր սկսա անդ ունա զկատարումն» (էջ 560)։ Երրորդը՝ «...Գրեցաք երկիրս Հոնոյ... [ի յա]կունս Տիգրիս գետոյս, ի պանդուխտ միոչ. զի ոչ գոյր հովանոցք մեր, և մեր զարն ամենայն ահաբեկ լինեալ...» (էջ 389, տես նաև էջ 15, 390, 453 և այլն)։ Ընդգծումը ամենուր մերն է — Վ. Զ.)։

Մինչև հիմա իրոսում էինք սույն ժողովածուի գիտական նշանակության մասին, բայց ինչպես է կատարված այդ շատ կարևոր աշխատանքը։ Այս ժողովածուի մեջ, ինչպես և ամեն մի սկզբնաղբյուր հրատարակելիս ամենից կարևորը քննադրելու հարազատությամբ վերծանելն է, հապավումները և համառոտագրությունները ճիշտ բացելը, վնասված ու դժվար ընթերցելի մասերի վստահելի վերականգնումը և ողջ քննադրի ճշգրիտ ընդօրինակումը։ Ստուգելու համար հրատարակչի աշխատանքը, մենք համեմատեցինք ժողովածուի էջ 18 № 20, էջ 155—156 № 193, էջ 186 № 231, էջ 268—269 № 332, էջ 273 № 338, էջ 281 № 347, էջ 411 № 493, էջ 549 № 665, էջ 556 № 695, էջ 604 № 751, էջ 551 № 688 հիշատակարաններն իրենց ձեռագրերի և կամ այն ցուցակների հետ, որոնցից կատարված է հրատարակությունը։ Պետք է ասել, որ հիշատակարանների քննադրելու հրատարակված են անշեղ հարազատությամբ։ Այդ առումով այս ժողովածուն միակն է վերջին տասնամյակում հրատարակված սկզբնաղբյուրների մեջ, որը կարող է լինել այն լավագույն օրինակը, թե ինչպես պետք է հրատարակվեն սկզբնաղբյուրները։

Ընկեր հաշիկյանը քաջ ծանոթ լինելով Երևանի Մատենադարանի ձեռագրական ֆոնդերին, կարողացել է նաև ավելի ուշ ընդօրինակած ձեռագրերից առանձնացնել 14-րդ դարի հիշատակարանները և մուծել ժողովածուի մեջ։ Սրինակ՝ № 3276 ձեռագիրը կանոնագիրք է և ընդօրինակվել է 1640 թվին (էջ 407ա), բայց այստեղ տեղ են գտել նաև 1355 թվի և 1384 թվի գրված հիշատակարաններ, որոնք գտնվում են այս ժողովածուի 411 և 551 էջերում։

Փննության ենթակա ժողովածուն գերծ չէ նաև որոշ թերություններից։

Ընկեր հաշիկյանը առաջաբանում (էջ XXVIII—XXIX) նշում է, որ չի օգտագործել մի շարք վայրերի հայերեն ձեռագրերի ֆոնդերը, հեղինակից անկախ՝ ձեռագրերի ցուցակները չի ներկայացրել պատճառով։ Չօգտագործած նյութերի մեջ են նաև Երուսաղեմի ս. Հակոբի վանքի Մատենադարանի ձեռագրերը։ Սակայն եթե հեղինակը չի կարողացել օգտագործել Սյուրմելյանի կողմից վերջերս հրատարակված Երուսաղեմի Մատենադարանի հայերեն ձեռագրերի մայր ցուցակի առաջին պրակը, ապա նա, գեթ մասնակի չափով, կարող էր այդ բացը լրացնել Մկրտիչ Կախկոպոս Աղափունու «Միաբանք և այցելուք հայ Երուսաղէմի» (1929 թ., Երուսաղեմ) աշխատության օգտագործմամբ, որտեղ գտնում ենք 14-րդ դարի (և ոչ միայն 14-րդ դարի) մի շարք մեծ ու փոքր հիշատակարաններ։ Որպես օրինակ բերենք մի քանի հետաքրքիր հիշատակարաններ։

1. Լջ 156—157. «...նաև նախ քան զտասն ամ գրութեան տառիս (1302) գրեալ եղև տաճկաց հայրապետական աթոռն Հոռմկլայ՝ յորմէ և եմ ես նուաստս Քոմաս արեղայս՝ և տարաշխարհիկ եղեալ ի հայրենի տեղոյ իմոյ յերբէմն ի վաղնչուց ամաց ճոխութեամբ փառաւորեցելոյ՝ ի նշանաւորն ասեմ զղեկէ յորմէ ամաւ և կիսով նախ քան զառնուլն պատահեաց ինձ ելանել և գալ յաշխարհս Կիլիկոյ յուսով տեսութեան ս. գերեզմանին քրիստոսիս:
2. Լջ 168—169. Կիրակոս Արևելացու յասմավորքում գտնվում է Լևոն Դ-ի ինքնագիր հետևյալ հիշատակարանը. «Ես Լևոն թագաւորս ամենայն Հայոց զպիտակս ամենայն գործուց բարեաց, զՅիսուս յիշեսչիր, ով ընթերցող, աղաչեմ և պաղատեմ և դուք յիշեալ լիչիք ի տէր Յիսուս. զիմ ապաւինեալ Քրիստոսն աղաչեցէք. թերևս ինձ ողորմեսցի ահեղ ատենին և ի բորբոքեալ բոցոյն նորա: Ես Լևոն թագաւորս ամենայն Հայոց, ի թվին 928 (1330) շնորհեցի զգիրքս Քարաբոյ հայ ծառայնուն, որ յամենայն ժամ կարդան եկեղեցիս զմարտիրոսացն հաճատակութիւն և զքրիստոնէութիւն հաւատոյն, որ վասն անուանն Քրիստոսի յանձինս յուրեանց կրեցին, զոր լսեն ծառայքն և քաջալերեալ յորդորին, ի սէրն Քրիստոսի և հաստատին և հաւատս նորին և համբերութեամբ տանին բազում վրշտաց և նեղութեանց, զորս կրեն վասն անուանն Քրիստոսի, ակն ունելով երանական յուսոյն, և հետևող լինին բազմաշարշար մարտիրոսացն, և յորժամ ընթեռնումն ե լսեն զաւրշարանս մարտիրոսաց նա զմեզ յիշեն յաղօթս իւրեանց: Ու կու աղաչենք զբահնայրդ որ զկարդալն անփոյթ չայնէր վասն սիրոյն Քրիստոսի, որ աւրհնեալ և յաւիտեանս:
3. Լջ 169. «Ով սուրբ եղբարք, որք ընթեռնուք զսրբոցն ճշնութիւն և զկատարումն ու մխիթարիք հոգով, յիշեցէք ի Քրիստոսի զպարոն Վասիլն զտէր Սիմանայ Կլային Բաղլէրն (Պօտլեո), որ է քեռի Լևոն թագաւորին, և եքեր զգիրքս ձեզ ի մխիթարութիւն: Դուք խնդրեցէք ի Քրիստոսէ թողութիւն և իւր նախնեացն արքայութիւն. և ի բանտէն ձեզ ազատութիւն և տէրն կատարէ զխնդիրքն ձեր ի բարին: Եւ զանարժանս այլ յիշեցէք զԴրիգոր երէցս Սիմանայ Կլայիցս որ եկի... ի հետ իմ պարոնին ու բերաք զգիրքս Քարաբոյ եկեղեցւոյն ի թվին 929 (1329), և Սիմոն թարգմանին մեղաց թողութիւնս:
4. Լջ 170—171. «Եւ դարձեալ ի յամին թուականութեանս Հայոց ՊԻԿ (1374) առաւ Սիս ի քրիստոնէից և Լր յայն ժամանակն կաթողիկոս Հայոց տէր Կոստանդին Լամբրոնացին, այլ իմաստուն և հանճարեղ, և Լր թագաւոր Հայոց պարոն Լևոն, որդի Բրինձին, սա թագաւորեաց Հայոց ամիս է (7). սա վարեցաւ գերի ծգիպտոս, թագուհին իւրով և որդւով իւրով. բայց մեծ թագուհին Հայոց Մարին յնրուսաղէմ մեծաւ առաքինի ճշմարտութեամբ ամս...? և հանգեաւ ի Քրիստոս ի թուաբերութեան Պ... և ի յուլիս ամսոյ ԺԸ... (անընթեռնելի) վասն զի յոյժ ողորմած Լր և աղքատասէր, սա թաղեցաւ առաջին դրան սբ. Յակոբայ, սա պարգևեաց մեծ զսբ. Նշան, որ տէր Յակոբ կաթողիկոս, ի սմունել ստացայ ես զսբ. զաստուածախաւս աւետարան...»:

Տես նաև վերոհիշյալ աշխատութեան 8, 14, 30, 47, 109, 197, 223—224, 264, 434 և այլն լէրերը Առավել ընդարձակ և քանակով շատ հիշատակարաններ գտնվում են 15 և 16-րդ դարերին վերաբերող:

Ընկ. հաշիկյանը ներածականում նշում է, որ Ե. Լալայանի «Յուլեակ հայերէն ձեռագրաց «Վասպուրականի» աշխատութեան անտիպ մասը չի օգտագործել, որովհետեւ հրատարակչին չի հաջողվել պարզել, թե թորտեղ է գտնվում Լալայանի անտիպ ցուցակի մյուս՝ մեծագույն՝ մասը, շուրջ 822 ձեռագրի նկարագրութիւններով և հիշատակարաններով (էջ XXVI): Ե. Լալայանի վերոհիշյալ աշխատութեան անտիպ մասից 8 տետր մեզ հաջողվեց գտնել Պատմ. ինստիտուտի արխիվում՝ հանգուցյալ Ս. Շալջյանի արխիվային ֆոնդում: Բացի դրանից, բարեբախտաբար, այդ հավաքածուից օգտվել է հանգուցյալ Մ. Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս) հայերին ձեռագրերի ցուցակը կազմելիս: Վերջինս հիմա գտնվում է Գիտութիւնների Ակադեմիայի Պատմութեան ինստիտուտի արխիվում: Այսպիսով, նշված թերին ընկ. հաշիկյանը կարող էր ծածկել վերոհիշյալ աշխատութեան օգտագործումով:

Լենինգրադի Ս. Շչեդրինի անվան հանրային գրադարանի ձեռագրերի բաժնի հայերեն ձեռագրերի ֆոնդում գտնվում է 1331 թվի միայն մեկ հիշատակարան հետևյալ բովանդակությամբ.

«Փառք ամենասուրբ երրորդութեանն հաւր և որդւոյ և հոգւոյն սրբոյ այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից: Արդ՝ զրեցաւ եղականաւոր տառս, որ կոչի մանրուսումն ի լաւ և յրնտիր արինակէ վաւճցի (?). զոր յարմարեալ էին երաժշտապետքն Արքայկաղնոյ: Արդ՝ գրեցաւ սա ձեռամբ բազմամեղ և անարժան քահանայի Կարապետի, որ մա-

կանուն Վայրի կոչի, ի խնդրոյ սրբասէր և պատուական քահանայի Յովանիսի, ի թվին Հայոց Զ (1331) և հայրապետութեան տեառն Յակովբա և ի թագավորութեանս Հայոց Լեոնի բարեպաշտի և աստուածասիրի, զոր և պահեսցէ զնա Քրիստոս աստուած ընդ երկայն աւուրսւ Արդ՝ գրեցաւ սա ի սուրբ և ի հռչակաւոր անապատս, որ կոչի Անրդեասանց, ընդ հովանեաւ սուրբ Սիոնի և կենսակիր սուրբ Նշանիւ Արդ՝ աղաչեմ զամենեւեան մանկունք առադաստի, որք հանդիպիր այսմ տառի յիշեցէք զյառաջ ասացեալ ստացաւ սորա զսրբասէր վանից քահանայ զՅովհաննէս, որ ստացաւ զսայ ի վայելումն անձին իւրոյ և յիշատակ բարի հոգւոյ իւրոյ և ծնաւազ իւրոց և ամենայն աբեան մերձաւորաց հաւր իւրոյ Վրթանէս քահանայի և մարն իւրոյ Մելիք տիկնայ և եղբայրն իւրոց Սերովբէի և Ներսէսի և ամենայն զարմից կենդանեաց և ննչեցելոց: Ընդ նմին և բազմամեղ գրչիս Կարապետի և ինքն ամէնառատն աստուած նախ ձեզ ողորմեսցի և ապա ձեզ և որ զամէնն ասէ: Արդ՝ ես Յովհաննէս քահանայ երեսս անկեալ աղաչեմ, որ յիշատակարանս իմ ոչ հատաներ և ոչ ջնջեր, և որ յանդգնի կամ ջնջէ ջնջեսցի ի դրպութենէն կենաց և ինքն աստուած արհեսեալ եղիցի յաւիտեան» (Արմ. Խ. Գ. 4, էջ 230բ—232բ): Իսկ Արեւելագիտական ինստիտուտի հայերեն ձեռագրերի ֆոնդում № Ը—21-ի տակ գտնվում է «հաւաքմունք հիշատակարանաց» ժողովածուն, որտեղ, որքան մեզ հայտնի է, 14-րդ դարի հիշատակարաններ չկան, միայն № Ա—12 ձեռագրում գտնում ենք 1381 թվի մի հիշատակություն:

Այս, ինչպես և Բաբվում ու էջմիածնում գտնվող ձեռագրերը պետք է ստուգել և եթե կան 14-րդ դարի հիշատակարաններ, ապա մուծել դրանք հաջորդ ժողովածուի հավելվածում:

Չնայած ընկ. Խաչիկյանը XV և հետագա դարերի ձեռագիր ժողովածուից հավաքել է XIV դարի հիշատակարաններ, բայց XIII դարի մի շարք ձեռագրերի վերջում, դատարկ թերթերի վրա ձեռագիր նորոգողները թողել են հետաքրքիր հիշատակարաններ, որոնք դուրս են մնացել ժողովածուից. օրինակ՝ մեզ հայտնի է № 6764 ձեռագիրը, որը Կեռան թագուհու պատվերով 1283 թ. գրված ավետարանն է, ձեռագրի 264ա—265 ա էջերում գրված է 1357 թ. հետաքրքիր հիշատակարան, կամ № 2630 ձեռագրի 284ա և բ էջերում և այլն:

Ժողովածուի մեջ հիշատակարանները դասավորված են ժամանակագրական հաջորդականությամբ, այլ կերպ էլ չէր կարող լինել, սակայն ընկեր Խաչիկյանն իր այդ սկզբունքը երբեմն խախտել է, օրինակ՝

1. էջ 68 № 92, Բ հիշատակարանը 1312 թվի է, բայց դրված է 1310 թվի շարքում:

2. էջ 69 № 93 Բ հիշատակարանը 1442 թվի է, բայց դրված է 1310 թվի շարքում:

3. էջ 285 № 350 Բ. հիշատակարանը 1339 թվի է, բայց գրված է 1336 թվի շարքում (տես նաև էջ 22 № 26, էջ 209 № 264, Դ և այլն): Այդ գուցե արված է այն նկատառումով, որ նշված հիշատակարանները գտնվում են միևնույն ձեռագրի մեջ ու գրված են միևնույն գրչի կողմից: Սակայն ուրիշ դեպքերում այդպիսիք արված են առանձին, օրինակ՝ էջ 2 № 3 և էջ 529 № 656, էջ 19 № 21 և էջ 2 № 3, էջ 411 № 493, էջ 551 № 688 հիշատակարանները և այլն, բացի դրանից հիշատակարանների ժամանակագրական կարգը, որը սահմանել է հեղինակը, հետևողականորեն պետք է պահպանվեր բոլոր դեպքերում:

Հեղինակը ժողովածուի մեջ, ձեռագրի վերնագրի ներքևի մասում, փակագծերի մեջ, մանր տառերով նշում է տարեթվեր, օրինակ՝ 65-րդ էջում 1310 թվի հիշատակարանների շարքում կարգում ենք՝

№ 89

Աւետարան

Ծրեան 380 (տես նաև՝ 1443 թ.)

Այդ նշանակում է, որ Ծրեանի Մատենադարանի № 380 ձեռագրում 1310 թվի հիշատակարանից բացի գտնվում է նաև 1443 թվի հիշատակարանը:

Մեզ թվում է ընկեր Խաչիկյանն ավելորդ աշխատանք է կատարել, որովհետև սույն ժողովածուի մեջ կարիք չկար նշելու, թե հաջորդ դարերից ինչ հիշատակարաններ կան տվյալ ձեռագրի մեջ, քանի որ այդ գործին ոչնչով չի օգնում: Երբ կազմվի վերահիշյալ դարերի հիշատակարանների ժողովածուն, դրանք տեղ կգտնեն այնտեղ: Այս նշում ենք մասնավորապես նրա համար, որովհետև մի քանի դեպքերում սրբագրական սխալների հետևանքով գտել ենք անճշտություններ. օրինակ՝

1. էջ 204 № 256 հիշատակարանի վերնագրի տակ նշված է «Ծրեան 156» (տես նաև

1372 թ.)»։ 1372 թվի հիշատակարանների շարքում (էջ 503—506) № 1562 ժողովածուից բերված հիշատակարան չենք գտնում։

2. էջ 19 № 21 հիշատակարանի վերնագրի տակ նշված է «Երևան 1527 (տես նաև 1301 և 1339 թ. թ.)»։ 1339 թվի հիշատակարանների շարքում (էջ 320—323) № 1527 ժողովածուից բերված հիշատակարան չենք գտնում, մինչդեռ այն գտնում ենք 1379 թվի շարքում (էջ 529), այստեղ էլ վրիպակով է ցույց տրված 1302 թվի շարքը, որովհետև այն պետք է լինի 1301 թվի շարքում (էջ 2 № 3)։ Նման սխալ տես նաև առաջարկում (էջ XXXII) և այլն։

Ժողովածուի մեջ տողատակ հաճախ տրված են ծանոթագրություններ, որոնք մեծ մասամբ աղբյուրագիտական և բանասիրական հարցեր են շոշափում։ Սակայն մի շարք դեպքերում, որ պետք է տրվեր ծանոթագրություններ, չի տրված։ Օրինակ՝ ժողովածուի 186-րդ էջում 1323 թվի հիշատակարանում կարդում ենք. «Երայսմ ամի էջ խանն հաղան բաղում և անթիւ դարաւր յաշխարհէն, որ կոչի Շամբ...»։ Այս վկայությունը բացահայտ սխալ է և ծանոթագրությամբ պետք է նշվեր, որ Ղազանը մահացել էր 1304 թ. մայիսի 17-ին (Рамид-ад-дин, «Сборник летописей», том II, Москва—Ленинград 1946, ст. 202), հետևապես 1323 թվին նա Սիրիա արշավել չէր կարող։ Իսկ իրականում Ղազանը Սիրիա արշավել է 1299 և 1300 թվերին (մանրամասնություններ տես՝ նույն տեղ, էջ 182—187)։ 1323 թվին թագավորում էր Աբու-Սաիդը (1316 մինչև 1335 թվերը, տես Лэн-Пуль, «Мусульманские династии», СПб, 1899, ст. 183), որի ժամանակ նման արշավանք տեղի չի ունեցել։

Ժողովածուի 455-րդ էջում կարդում ենք. «Թվ. ՊԺԱ (1362) դրացաւ ի պարոնութեան Ամիր Դիատինին, ի դանութեան Ուլիսինին»։ Վերջին անվան լսողով տողատակ տրված է ծանոթագրություն, որ այդ անունը ժողովածուի մեջ մուծվել է Փիրդաւեմյանի մոտ պահված մի հիշատակարանից։ Նույն անունը գտնում ենք նաև № 611 հիշատակարանում (էջ 498)։ Բայց երկու տեղում էլ բացատրություն չենք գտնում, թե ո՞վ է այդ մարդը և արգյո՞ք ճիշտ է բերված անունը։ Բնագրում հիշված Ուլիսը Իրաքում իշխող Ջելաիրների տիրակալներից էր, Հասան Բուզուրգի հաջորդը՝ շեյխ Ուվեյսը, որն իշխել է 1356-ից մինչև 1374 թվերը Лэн-Пуль «Мус. дин» с. 207 (նույնը տես Մսր քաղաքի մասին, էջ 397 և այլն)։

Մի երկու ծանոթագրության մեջ կան ակնհայտ սխալներ. օրինակ՝ գրիչը 1329 թվին ընդօրինակելով մի աշխատություն, ավելացնում է. «Ի տաւնի համարձման տեառն սկսեալ և ի խաշավերաց տաւնիս վճար եղև ի գրելոյ» (էջ 221—222). տողատակ տրված է հետևյալ ծանոթագրությունը. «Ըստ այսմ, ձեռագրի գրությունը սկսել է մայիսի 12-ին (կամ 17-ին) և ավարտել սեպտեմբերի 14-ին»։ Այս հաշվումը ստույգ չէ։ Նշանավոր մաթեմատիկոս Գաուսի մի բանաձևի համաձայն մեր կատարած հաշվումներով 1329 թվի զատիկը կրկնի ապրիլի 23-ին էր (Ed. Dulaurier, «Recherches sur la chronologie Armenienne» tome I-er, Paris, 1859, p. 410), ըստ այսմ Համարձման տունը կհամապատասխանի հունիսի 1-ին (զատկից 40 օր հետո), իսկ հաշվերացը՝ սեպտեմբերի 17-ին։

Մի այլ օրինակ. 1352 թվի առնչությամբ գրիչն անց է կացնում տոմարական զուգահեռներ նշելով նաև Սարկավագի տոմարը. օրինակ՝ «Ըստ նորումս շրջանի ՄԿԹ (269)» (էջ 399 № 479)։ Տողատակ տրված ծանոթագրությամբ ընկ. հաշիկյանը գրում է՝ Սարկավագի տոմարի «առաջին տարին համապատասխանում է 1083 թվականին»։ Սակայն վաղուց ի վեր ցույց է տրված, որ Սարկավագի տոմարը հիմնվել է 1084 թվին և նրա առաջին տարին համապատասխանում է 1085 թվին (տես Ed. Dulaurier, «Recherches sur la chronologie Arménienne», tome I-er, p. 81, 113—114). Այս բանը հաստատվում է սույն ժողովածուի մի շարք հիշատակարանների տվյալներով. օրինակ՝ «կատարեցաւ ի թուարերութեանն Ազբանազեան և Յարեգական տումարի ՊԼԳ (1384), և ըստ նորում շրջանի Յ (300)»... (էջ 548)։ Այստեղից՝ 300 + 1084 = 1384 թ.։ Կամ «Ի թուարերութեանն Ազբանազեան և Յարեգական տումարի ի ՊԻԴ (1374), և ըստ նորում շրջանի ի ՄՂԱ (291)»... (էջ 518). այստեղից 291 + 1084 = 1375 թվին և այլն։

Մի շարք դեպքերում կան տոմարական զուգահեռներ (էջ 397 № 478, էջ 215 № 272 և այլն), որտեղ հայկական, Սարկավագի և փրկչական թվականների մեջ կա 1—2 տարվա տարբերություն, բայց բացատրված չեն, թե ինչու այդ պես պետք է լինի։ Զի բացատրված նաև հայկական ամսաթվերով բերված հաշվումները, օրինակ էջ 55 № 71, էջ 19 № 22, 72 № 97, Ա. 597 № 743 և այլն։

Թավական հարուստ են և մանրամասն են կազմված անձնանունների և տեղանունների ցանկերը, բայց վատ չէր լինի, եթե աշխատությունը կից կազմվեր նաև գրչության կենտրոնների ցանկ կամ քարտեզ, ինչպես նաև օտար բառերի բացարան։ Ծիշտ է, մի շարք օտար բառեր տո-

դատակ բացատրված են, բայց և կան բացատրության կարոտ բառեր. օրինակ՝ տէլէտ (էջ 557 № 627), շարոըն (էջ 483 № 591), լէճէնթա (էջ 443 № 532) և այլն:

Չնայած քիչ, բայց և այնպես ժողովածուի մեջ նկատելի են նաև սրբագրական թիւութիւններ. օրինակ՝ էջ 399 № 479-ում գրված է «ՊԱ (1252)», պետք է լինի «ՊԱ (1352)», էջ 416 № 499 գրված է «ՊԵ (1256)», պետք է լինի «ՊԵ (1356)», էջ 433 № 520 գրված է «ՊԷ (1368)», պետք է լինի «ՊԷ (1358)» (տես նաև էջեր 444 №535, 451 № 545, 619 № 774 և այլն):

Այդ կարգի սխալների թվին պետք է դասել, օրինակ՝ 545-րդ էջի 2-րդ ծանոթագրութիւնը, որտեղ մի բառ («լինի») շարվածքից դուրս է ընկել:

Վերև նշված թերութիւնները մանր են և հեշտ ուղղելի, իսկ հիմնականն այն է, որ ընկ. հաշիկյանը խոշոր աշխատանք է կատարել հայագիտության համար: Այդ պատճառով մեր մասնագետ ընկերները նրա քրտնաջան աշխատանքը կընդունեն մեծ դոհունակութեամբ և շնորհակալութեամբ:

Մի քանի խոսք էլ ասենք սույն ժողովածուի հրատարակության մասին: Քննության ենթակա աշխատութիւնը աղբյուրագիտական ժողովածու է, այդ նշանակում է, որ այն դարերի կյանք է ունենալու և սերունդների ձեռքով է անցնելու: Թվում էր թե Հայկական ՍՍՏ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատարակչութիւնը կգիտակցեր այս բանը և այն կհրատարակեր լավբաւ թղթով և ամուր կաղմով, մինչդեռ անորակ է ժողովածուի և՛ թուղթը, և՛ կաղմը: Սրան պետք է ավելացնել նաև ժողովածուի տիրաժի խիստ սահմանափակ լինելը (600 օրինակ):

Վ. ՀԱԿՈՐՅԱՆ